

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի Հանրապետության պետական
կառավարման ակադեմիայի ռեկտոր,
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

 **Խ. Ա. Ղազեյան**

«17» ապրիլի 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

**Սասուն Մյասնիկի Բախշյանի Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների
տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար «Հայաստանի
Հանրապետության մեդալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման
հիմնախնդիրները» թեմայով արենախոսության և սեղմագրի վերաբերյալ**

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
Կառավարման ամբիոնի 2023 թ. ապրիլի 17-ի նիստում (արձանագրություն թիվ 3):

Նիստին մասնակցում էին՝ Կառավարման ամբիոնի հիմնական աշխատակիցներ
Վ. Խաչատրյանը՝ Կառավարման ամբիոնի վարիչ՝ տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, ամբիոնի դոցենտներ՝ Գ. Չատինյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
Գ. Աղամյանը՝ տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Ա. Զալինյանը՝ տնտեսա-
գիտության թեկնածու, դոցենտ, Պ. Սաֆարյանը՝ տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ, Ս. Հարոյանը՝ տնտեսագիտության թեկնածու, Ա. Գևորգյանը՝ տնտեսագիտու-
թյան թեկնածու, Թ. Խեչոյանը: Կառավարման ամբիոնի ժամավճարային հիմունքներով
դասախոսներ՝ Գ. Միրայեյանը, Գ. Թովմասյանը, Ք. Վարդանյանը և այլք:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մետաղական պաշարներով հարուստ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս շարունակում է մնալ հանքարդյունաբերական հումք և մետալուրգիական կիսաարտադրանք արտադրողի և արտահանողի դերում՝ ամբողջությամբ չիրացնելով ոլորտի ներուժն ու հնարավորություններն ավելացված արժեքի շղթայի բարձրարժեք մակարդակներում: Հայաստանի ներկա տնտեսական, անվտանգային հիմնախնդիրների լուծումը պահանջում է առկա ռեսուրսների օպտիմալ օգտագործում, որի իրատեսական ու համադրելի միջազգային լավագույն փորձով հիմնավորված ուղիներից մեկը կայացած հանքարդյունաբերության հենքով ՀՀ մետալուրգիական արդյունաբերության զարգացումն է՝ կայուն զարգացման դրույթներին համապատասխան: Ոլորտի կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծմանը նպաստող համապատասխան տնտեսական քաղաքականության ու մեխանիզմների, մետալուրգիական արտադրությունների տնտեսական, բնապահպանական և սոցիալական համալիր տեսանկյունից հիմնավորված ծրագրերի մշակումը կնպաստեն ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացմանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղիների մշակումն ու նախանշումը:

Առաջադրված նպատակն իրագործելու համար առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ուսումնասիրել Հայաստանի մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա հիմնախնդիրները,
- ✓ վերլուծել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչները,

- ✓ գնահատել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման նշանակությունը, տեղը, դերը, զարգացման հանքահումքային հենքը,
- ✓ վերլուծել համաշխարհային և հայրենական մետալուրգիական շուկայի կայուն զարգացման ժամանակակից միտումները և կանխատեսումները,
- ✓ հարցը դիտարկելով ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման միկրո և մակրո միջավայրերի մակարդակներով՝ բացահայտել ոլորտի ուժեղ և թույլ կողմերը, առկա հիմնախնդիրները, լուծման արդյունավետ ուղիները,
- ✓ մշակել մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը բնութագրող ինդիկատոր,
- ✓ բացահայտել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնական ուղղություններից մեկի՝ պղնձի արտադրության կազմակերպման էկոլոգիատնտեսական հիմքերը, հիմնական խոչընդոտներն ու խնդիրները և առաջարկել դրանց լուծման կոնկրետ և միջազգային պրակտիկայում արդարացված լուծումներ,
- ✓ իրականացնել էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության (մետաղների համալիր կորզմամբ) ծրագրի տնտեսական գնահատում, հաշվարկել ծրագրի կանխատեսվող մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
- ✓ մշակել ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային մեխանիզմի բարելավման ուղի, որը կնպաստի մետալուրգիական վերջնարդյունքի՝ մաքուր մետաղի և նրանից պատրաստվող արտադրատեսակների արտադրության խթանմանը,
- ✓ զարգացման իրական հնարավորություններ ունեցող արտադրությունների ուղղությունները դիտարկել որպես մեծ ավելացված արժեքներ ստեղծող մետաղական շրջափոխի ավարտուն փուլ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Հետազոտության արդյունքում ստացվել են գիտագործնական նշանակության արդյունքներ, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը բնութագրող ինտեգրալ ինդիկատոր,
2. հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պղնձի արտադրության շեշտադրությամբ, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի (մետաղների համալիր կորզմամբ) տնտեսական գնահատում, հաշվարկվել է ծրագրի մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
3. առաջարկվել է ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպման հիմնական էկոլոգիատնտեսական խոչընդոտներից մեկի՝ ծծմբի իրացման մարքեթինգային լոգիստիկ խնդրի իրատեսական լուծում,
4. մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային մեխանիզմի բարելավման ուղի, որը կխթանի մետալուրգիական վերջնարտադրանքների արտադրությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, ներկայացվել են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը և կիրառությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնահարցերը և ժամանակակից միտումները» գլխում հիմնավորվել է ՀՀ ՄԱ կայուն զարգացման անհրաժեշտությունը, ներկայացվել են կայուն զարգացման էությունը, բաղադրիչները, ձևերը, ինչպես նաև դրանց դրսևորման առանձնահատկու-

թյուններն ու միտումները ՀՀ մետալուրգիական արդյունաբերության ոլորտում: Ատենախոսության այս գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման՝ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բաղադրիչները:

Ատենախոսության երկրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման առկա իրավիճակի ուսումնասիրություն» գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության հայրենական հումքով զարգացող հիմնական ուղղությունների՝ մոլիբդենի, ոսկու և պղնձի ոլորտների, ինչպես նաև ներկրվող հումքի՝ ալյումինի և պողպատի ոլորտների զարգացման առկա իրավիճակը և զարգացման միտումները: Ներկայացվել են կայուն զարգացման ինդիկատորները և մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայունությունը գնահատող ինտեգրալ ինդիկատոր:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման հիմնական ուղիները» գլխում ուսումնասիրվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման պղնձի արտադրության գործոնը, ոլորտի հենքով կայուն զարգացող տնտեսության ճյուղերի գործունեությունը որպես կայունության բարձրացման ուղի, ինչպես նաև մշակվել է Հայաստանի Հանրապետությունում մետալուրգիական վերջնարտադրանքների արտադրությունը խթանող հարկային մեխանիզմի բարելավման փուլային ուղի: Դիտարկվել են մետալուրգիական նորագույն և ապագայում կիրառվելիք տեխնոլոգիաների ուղղությունները ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման գործընթացում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

- մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացումը բնութագրող ինտեգրալ ինդիկատոր,
- հիմնավորվել են ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները պղնձի արտադրության շեշտադրությամբ, իրականացվել է էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի (մետաղների համալիր կորզմամբ) տնտեսական գնահատում, հաշվարկվել է ծրագրի մակրոտնտեսական պոտենցիալ ազդեցությունը,
- առաջարկվել է ՀՀ-ում պղնձի արտադրության կազմակերպման հիմնական էկոլոգիատնտեսական խոչընդոտներից մեկի՝ ծծմբի իրացման մարքեթինգային լոգիստիկ խնդրի լուծում,
- մշակվել է ՀՀ մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման բարելավման նպատակով ավելացված արժեքի հարկի գործող հարկային մեխանիզմի բարելավման ուղի, որը կխթանի մետալուրգիական վերջնարտադրանքների արտադրությունը:

Ստացված գիտագործնական արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների, մետալուրգիական ընկերությունների կողմից՝ ոլորտի կայուն զարգացումն ապահովելու նպատակով: Պղնձի արտադրության ծրագրի տնտեսական հիմնավորումը և էկոլոգիատնտեսական խոչընդոտների հաղթահարման կազմակերպման ուղղությամբ ծծմբի իրացման խնդրի լուծման մարքեթինգային լոգիստիկ առաջարկությունը կարող է օգտակար լինել ներդրողներին և որոշում կայացնողներին:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կատարված հետազոտությունում դրականի հետ միասին կան նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից կարելի է առանձնացնել.

1. Հետազոտության նպատակից բխող ոչ բոլոր խնդիրներին են տրվել լուծումներ, մասնավորապես, 4-րդ խնդրի լուծումը, նախ և առաջ, պահանջում էր որոշակի դինամիկա ունենալու համար ըստ առանձին շուկաների պարզել սուբյեկտները (1-ին փուլ), որը չի արվել, ապա դրանից հետո միայն վերլուծել շուկաները:

Ց-րդ խնդրի (էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիայով պղնձի արտադրության ծրագրի տնտեսական գնահատում) լուծման համար անհրաժեշտ էր ծրագրի իրականացման ծախսերի, ակնկալվող եկամուտների և զուտ ներկա արժեքի հաշվարկներ կատարել, որի շնորհիվ հնարավոր կլիներ գնահատել վերոնշյալ ծրագրի իրականացման նպատակահարմարությունը:

2. Հեղինակի կողմից մի շարք աղյուսակներում թվային տվյալներն ուսումնասիրվում են երկու տարվա կտրվածքով՝ 2020-2021թթ. (աղյուսակներ՝ 1.2.4., 1.2.5. և այլն), վերջինս բավականին կարճ ժամանակահատված է մակրոտնտեսական և տնտեսական զարգացման երևույթների վերաբերյալ լիարժեք գնահատականներ տալու, փուլային բաժանման և շրջադարձային կետերը բացահայտելու առումներով:
3. Մեթոդական առումով վիճելի է լրիվ ինքնարժեքի մեջ «ֆինանսական մուծում» եզրույթը ներառելը (էջ 121, աղյուսակ 3.1.1), քանի որ հեղինակը նախ պետք է պարզաբաներ «ֆինանսական մուծում» եզրույթի էությունը, ապա այն ընդգրկեր լրիվ ինքնարժեքի հաշվարկի մեջ:
4. Աշխատանքում որոշ դեպքերում արված են ընդհանրական բնույթի դատողությունների տեսքով առաջարկություններ: Մասնավորապես. ի՞նչ անելու փոխարեն անհրաժեշտ է հիմնավորել և ներկայացնել՝ ինչպե՞ս անել, և առաջարկել համապատասխան իրականացման մեխանիզմներ կամ կառուցակարգեր (էջ 121):
5. Աշխատանքում օգտագործվում են մի շարք օտարալեզու տերմիններ, որոնց հայերեն համարժեքներն առկա են. պոտենցիալ՝ ներուժ, էկոլոգիական՝ բնապահպանական, գլոբալ՝ համաշխարհային, ասպեկտ՝ տեսանկյուն, ինդիկատոր՝ ցուցանիշ, այս վերջինի հետ կապված կարծում ենք, որ կարելի էր փորձել հստակ տարանջատել «ինդիկատոր», «ինտեգրալ ինդիկատոր» և «ցուցանիշ» հասկացությունները՝ նշելով դրանց միջև առկա տարբերությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը շարադրված է գրագետ: Արված դիտողությունները, մեր կարծիքով, չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են ատենախոսի հետագա ուսումնասիրությունների որակի բարելավման նպատակ:

Սասուն Մյասնիկի Բախշյանի ատենախոսությունն ունի որոշակի գիտագործնական նշանակություն, ինքնուրույն և համալիր հետազոտություն է, որում դրվել և լուծվել են Հայաստանի Հանրապետության համար արդի խնդիրներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են 16 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Սասուն Մյասնիկի Բախշյանի «Հայաստանի Հանրապետության մետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Գրախոսներ՝

տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Վ.Վ. Խաչատրյանի և Գ.Մ. Միքայելյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար,
հոգեբ. գիտ. թեկնածու, դոցենտ



Վ.Վ. Խաչատրյան
Գ.Մ. Միքայելյան
Վ.Վ. Խաչատրյան



Ս.Հ. Պողոսյան